ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

2018-2019 ուստարի

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Լրացնել բաց թողած տառերը.

Ոսկ__արս, փղձու__, ա__պարար, հա__ճապակի, հա__շտակել, վաղ__րոք, այժմ__ական, խավ__ար, առաձ__ական, Ա__թամար կղզի:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Արտագրել՝ մեծատառը թողնելով ըստ անհրաժեշտության.

ԿԱՍՊԻՑ ԾՈՎ, ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ, ԳԵՏԻԿ ՎԱՆՔ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ, ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑ, ՀԱՏԻՍ ԼԵՌ, ՄԱՐ ԱԲԱՍ ԿԱՏԻՆԱ, ՊԱՐԶ ԼԻՃ, ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ՀՐԱՅՐ ԴԺՈԽՔ, ԲԶՆՈՒՆՅԱՑ ԾՈՎ, ԲԱՐՁՐ ՀԱՅՔ:

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Սյունակներից ընտրել մեկական արմատ (դեմ դիմաց գրված) ու ածանց և կազմել հինգ բարդ ածանցավոր բառ.

հաղթաթուղթ-անդամակցել	ելի
քաղցրաբարո-մեղմահունչ	ակ
դյուրաշարժ-ընթերցասրահ	յուն
սակագին-կողմնացույց	ություն
թանկագին-անարժան	եք

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Համապատասխանեցնել դարձվածքները և դրանց իմաստները.

ա/ ականջին օղ անել	1. խոչընդոտել
բ/ ճամփին քար գցել	2. փորձանքներից անվնաս դուրս գալ
գ/ սիրտը տեղն ընկնել	3. մեկին հոգս լինել
դ/ ուսերին նստել	4. հոգով հանգստանալ
ե/ ջրից չոր դուրս գալ	5. մտապահել

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Դուրս գրել գոյականները.

Նա սովորական հոգևորականներից և վարժապետներից ավելի ազդեցիկ էր խոսում, և զրուցակիցը ստիպված էր լինում առանց այլևայլության ենթարկվելու նրան: Նա ուներ հուսալի խելամտություն, գիտելիքներ և փորձ, որոնցով օժտված են միայն իրոք հոգևոր անհատները: Խոստովանում եմ՝ շատ բան ունեի սովորելու այդ մարդուց:

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Կազմել տրված գոյականների հոգնակին.

փայտահատ _____

մարգաձող _____

գեղագետ_____

սպի_____

հարս_____

արձակագիր _____

բեռնակիր _____

վաչկատուն _____

ժամկետ_____

կինոաստղ_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Որոշել նշված բայերի *եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը, սեռը.*

համբուրում է _____

պիտի սպասի_____

կորոշենք _____

հանդուրժի՛ր _____

թռչեի_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Ընդգծել կապերը.

ա/ Դու անհոգ նայեցիր ինձ վրա

Ու անցար քո խաղով կանացի:

բ/ Այս իմ կտակը թող գրվի շիրմիս,

Եթե լուսնի տակ մի խորշ պիտի գտնեմ:

գ/ Եվ քարավանը Աբու-Լալայի, աղբյուրի նման մեղմ կարկաչելով,

դ/ Հանգիստ, միաչափ քայլում էր առաջ հեզ լուսնյակի շողերի միջով…

ե/ Մեկը լալիս է նորածնի պես,

Ճչում է, սակայն…արցունքներ չկան:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Կատարել շարահյուսական վերլուծություն.

ա/ ընդգծել բուն բացահայտիչը.

Նրան՝ ժողովրդի կողմից սիրված ու գնահատված անձնվեր զորավարին, չգնահատեց նենգ արքան:

բ/ ընդգծել որոշիչը.

Հայրենի քնքուշ մի հով,

Անցնելով բարդուց բարդի,

Գնում ու փարվում է լուռ

Լանջերին Արարատի:

գ/ ընդգծել բաղադրյալ ստորոգյալը.

Բանաստեղծություն գրելու պահին

Ամբողջ աշխարհն իմ տունն է:

դ/ ընդգծել հատկացուցիչը.

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա:

ե/ ընդգծել ուղիղ խնդիրը.

Չքնա՛ղդ Շամիրամ, ինչո՞ւ ես ինձ վիրավորում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Կազմել նախադասություն՝ չխախտելով տրված բառերի շարադասությունը:

ա/ Երկար, փնտրտուք, հետո, ավազակներ, տարակուսել, հեռանալ:

բ/ Շիկնել, Մեծ ու Փոքր Մասիս, գագաթներ, և, երկինք, ժպտալ, վաղորդայն, շողեր:

գ/ Մի, քանի, հազար, կազմվել, հեծելախմբեր, պաշարել, գետափ, ուղղություն, ձգվել, դաշտավայր:

դ/ Վաղ, հասակ, երկկենցաղներ, մեծ, մաս, ապրել, ջուր, և ձկներ, նման, շնչել, խռիկներ:

Ե/ Ձկներ, արծաթագույն, գունավորում, դրանք, վերև, տարածվել, ջուր, մակերևույթ, գույն, ձկներ, հարմարվել, արդյունք, է: